ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» ապրիլի 2016 թվականի N:113 - Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳԱՌՆԱՌԻՃԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության

նախարարի 2016 թվականի ապրիլի 14-ի N01/07.2/3732-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գառնառիճ համայնքի ղեկավարի 2016 թվականի մարտի 14-ի թիվ 25 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գառնառիճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի մարտի 9-ի նիստի թիվ 2 արձանագրությունը և ծնողական խորհրդի 2016 թվականի մարտի 9-ի նիստի թիվ 1 արձանագրությունը, Արմեն Ստամբոլցյանի 2016 թվականի մարտի 31-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գառնառիճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Աղավնի Հովհաննիսյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Վոլոդյա Խաչատրյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գառնառիճ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Վանիկ Մանուկյանի լիազորությունները,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Արուսյակ Աբրահամյանի, Արման Հակոբյանի լիազորությունները,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Հակոբ Սերոբյանի, Մուշեղ Գրիգորյանի լիազորությունները:

2. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 1-ին Խորհրդի կազմում հաստատված Արմեն Ստամբոլցյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

3. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Աղավնի Հովհաննիսյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Շուշաննա Հովհաննիսյանին, Վոլոդյա Խաչատրյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գառնառիճ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Վարդանուշ Բաղիշյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Գոհար Ղազարյանին, Սաթիկ Դիլանյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Լուսիկ Սարուխանյանին, Վարդանուշ Տեր-Հովհաննիսյանին:

4. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N109 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի ապրիլի «28» N 113-Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳԱՌՆԱՌԻՃԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Հովհաննիսյան Աղավնի	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Խաչատրյան Վոլոդյա	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Հովհաննիսյան Շուշաննա	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Բաղիշյան Վարդանուշ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Դիլանյան Սաթիկ	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Ղազարյան Գոհար	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Սարուխանյան Լուսիկ	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Տեր-Հովհաննիսյան Վարդանուշ	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան

Իսկականի հետ ճիշտ է